

աչքից նրա վերին շերտերի թանձր կապոյար: Բայց նոյնական մասի Միջերկրական ծովի երանելի երկնակամարը իր գոյներով շատ աւելի ետ է մնում լլաղաղ ովկիանոսի կենարոնական մասի երկնակամարից, ուր, չնորհիւ ցամաք հողի գրեթէ լիակատար բացակայութեանը, օդի ստորին շերտերը աւելի եռ ազատ են խոշոր փոշուց, քան թէ մի որեւէ ուրիշ տեղ երկրիս երեսին:

Եթէ մի բոլորովին պայծառ օր նայենք երկնքին, կը նըկատենք, որ ամենաջնջն և ամենաթանձր կապուտակը կը լինի հէնց մեր գլխին, մանաւանդ վերին, արեւի հէնց հակառակ կողմը: Հորիզոնի մօտ երկնքը գրեթէ երբէք չէ լինում պայծառ կապոյտ, իսկ անմիջապէս արեւի շուրջը միշտ նկատւում է աւելի կամ պակաս դեղին դոյն: Այս երեսյթը նրանիցն է առաջանում, որ հորիզոնին մօտիկ տեղերին նայելիս՝ մենք ստիպուած ենք լինում նայելու օդի ստորին, աւելի թանձր շերտերի միջով, որոնք սպիտակ լոյս արտացոլացնող, աւելի խոշոր փոշով են լցուած, և այս պատճառով հորիզոնի ափերին կապուտակը աւելի դժգոյն է, քան թէ երկնակամարի կենարունում: Իսկ արեւի շուրջը կապոյտ լոյսի մեծագոյն մասը ետ է արտացոլում մանրագոյն փոշուց դէպի անհուն տարածութիւնը, դեղնաւուն փայլ տալով այսպիսով այն լոյսին, որը արտացոլում է աւելի խոշոր փոշուց օդի ստորին շերտերը: Արեւի ծագելու և մայր մտնելու ժամանակ այս հանգամանքը առաւել ես նկատելի է ինում, չնորհիւ օդի ստորին շերտերի առաւել խտութեան, շերտերի, որոնց միջով է լոյսը մեր աչքին հասնում: Այս փոշու ահապին քանակութեան մասին կարելի է հասկացողութիւն կազմել այն բանից, որ երբ արեւը հորիզոնին մօտ է, մենք կարող ենք ազատ համարձակ նրան նայել, թէկուզ ամբողջ երկնքը անամապ լինի և անմառախուղ: Բայց այս դէպում արեգակնային ճառագայթները մեզ են հասնում, անցնելով նախ օդի վերին շերտերի թանձր միջութեան միջից, որի մանրագոյն փոշին արտացոլացնում է կապոյտի մեծագոյն մասը մեզ հակառակ կողմը, ճառապարհ տալով միայն լրացուցիչ դեղին լոյսին: Այսուհետեւ, ամբողջ աւելի խոշոր փոշին արտացոլացնում է կապոյտի մեծագոյն մասի շակագոյն լոյսին, և վերջապէս դեղին ճառապայթների մի մասը նոյնպէս արտացոլում է, և մեզ մօտ անցնում է գրեթէ բոլորովին մաքուր կարմիր լոյսը: Բայց, օդի անընդհատ հոսանքների չնորհիւ, որոնք թէ փոշին և թէ գոլորչին դասաւորում են աարբեր մեծութիւն և թանձրութիւն ունեցող շերտերով, մեր աչքին երեսում են գոյների և չքեղ, շարունակ փոփոխուող

գոյների այն դարմանալի միաւորումներ, որոնք հիացմունքի և զուարձութեան անսպառ աղբիւր են մի մարդու համար, որի աջը է առաջ բաց է արևմտեան կողմը և որը հետեապէս հընարաւորութիւն ունի ընութեան այս խայտարղէտ գունաւոր պատկերահանդէսները բաւականին յաճախ դիտելու։ Քանի աւելի է արևը մօտենում հորիզոնին, այս հանդէսների ընաւորութիւնն էլ փոխւում է, և գոյների խաղի հրապոյրը համառում է բարձրագոյն աստիճանին, երբ արեւը բոլորովին ընկղմւում է հորիզոնի ետև, որովհետև, արտացոլման աւելի նպաստաւոր անկիւնի չնորհիւ, մեզ համառում են աւելի շատ գունաւոր ճաճուագայթներ, մանաւանդ եթէ ոչ հեռու ցիր ու ցան են եղած բաւական ազատ ամպեր։ Քանի որ արեւը հորիզոնից բարձր է գտնուում, այս ամպերը աւելի շատ լրյու և գոյներ են կլանում, բայց երբ վեհ լուսատուն ծածկում է մեր աչքից, և նրա ճառագայթները սկսում են միայն՝ տարբեր խառութիւն ունեցող օդային չերտերի և ամպերի ստորին մասերը լուսաւորել, — ահա այն ժամանակն է, որ արևմտեան երկինքը բոցավառում է հրդեհի ցոլքերով և ցոյց է տալիս գոյների այն չքեղ, անընդհատ փոփոխուող խաղերը, որոնք այնքան զմայանք են պատճառում հասարակ հանդիսատեսին և որոնք իրանց նրբութեամբ ընդունակ են երբեմն նկարչին յուսահատութեան հասցնելու, եւ այս ամբողջ հրապոյրը մենք պարտական ենք փոշուն։

Այս տեսութեան փայլուն ապացոյցն ունեցանք կրակատօա (Ճաւա կղզու մօա) հրաբղիմի մեծ ժայթքումից յետոյ առաջին երկու-երեք տարուայ ընթացքում։ Հրաբուղինը պինդ զանգուածներ էր զուրա նետում շատ և շատ վերսակը ի վեր, և նրանցից ամենածանրերը ծովն էին ընկնում հրաբղիմ շուրջը հարիւրաւոր վերսակի վրայ։ Հետազոտութիւնը ցոյց տուեց, որ այդ զանգուածները, որոնք թռչում էին տարօրինակ ձիւնէ քուլաների նման, բազկացած էին գլխաւորապէս հրաբղային ապակու շատ բարակ կտորներից։ Այդ կտորներից շատերը ժայթքման ոյժից գառնում էին մանր փոշի, որը վեր էր սաւառնում մի քանի վերսատ բարձրութեան վրայ։ Այստեղ այդ փոշին յափշտակում էին հասարակածի օդային հոսանքները, որոնք փոփոխակի անցնում են մէկ հիւսիսից հարաւ, մէկ էլ հարաւից հիւսիս ամբողջ հասարակածապին գոտու վրայով։ Այս հոսանքները բարեխառն գոտուն համանելով, ուր երկրի մակերևույթի շարժումը այնքան էլ արագ չէ, չըջում են դէպի արեւելք, և այսպիսով նրանց յափշտակած առենարարակ փոշին հասնում է մինչև հեռաւոր լայնութիւնները և ցրւում է ամբողջ

երկրագնդի շուրջը։ Այս երևոյթի հետևանքները նկատուեցին վերև յիշուած հրաբղխային ժայթքումից մի քանի ամիս յետոյ և առաջացրին զարմանալի հրապուրիչ վերջալոյսեր, երբ երկնքի ամբողջ տեսանելի արևմտեան կէսը յաճախ ներկւում էր պայծառ արիւնանման գոյնով։ Վերջալոյսերի այսպիսի փայլն ու շքեղութիւնը շարունակ թուլանալով, ամբողջ երեք տարի տևեց։ Այս արտասովոր երեսյթը կարելի էր դիտել ամբողջ բարեխառն գօտում, և հաշուած է, որ առաջ քան նա վերջնականապէս անհետացաւ—բարակ փոշին կարողացաւ երեք անգամ պտտել երկրագնդիս շուրջը։

Պէտք է կարծել, որ նոյն սկզբունքով է բացատրւում և խոր ովկիանոսների, ծովերի և բազմաթիւ լճերի ու ազդիւրների հրաշալի կապոյտ գոյնը։ Բացարձակօրէն մաքուր ջուրը, որպէս և մաքուր օդը—բոլորովին անդոյն է, բայց որքան էլ մաքուր և թափանցիկ լինի ծովերի և լճերի ջուրը, այսուամենայնիւ իր մէջ առատութեամբ պարունակում է բարակ և լուծուած նիւթեր, օրգանական (գործարանաւոր) կամ անօրգանական (անգործարան) ծագում ունեցող, օրոնք, որպէս և օդի մէջ, արտացոլացնում են կապոյտ ճառագայթները այնպիսի քանակութեամբ, որ նրանք յաղթում են սպիտակ և ուրիշ գունաւոր ճառագայթներին, որոնք արտացոլում են աւելի խոշոր և աւելի ծանր, հետեւալէս և աւելի արագ յատակի վրայ նստող մասնիկներից։ Ովկիանական փոշին առաջ է գալիս տարբեր պատճառներից։ Մանր-մունր օրգանիզմները շարունակ մեռնում են ջրի երեսի մօտ, և նրանց մեացորդները կամ մեացորդների մի մասը կամաց իջնում է յատակից։ Յետոյ գետերը ահազին քանակութեամբ ցեխ են բերում ովկիանոս։ թէն այս ցեխը չէ կարելի ովկիանոսի յատակին գտնել ափերից աւելի քան 200 կամ 250 վերստ հեռու, բայց նա անկասկած մատակարարում է ովկիանոսներին օրգանական նիւթի անհամար մասնիկներ, որոնց ահազին հեռաւորութեան վրայ են տանում հոսանքները և վերջ ի վերջոյ լուծում են առաջ, քան նրանք յատակն են նստում։ Ովկիանոսների մէջ ցրուած նիւթի մի ուրիշ, աւելի կարեոր աղբիւրն է հրաբղխային փոշին, որը, ինչպէս տեսանք կրակատօայի օրինակից, կարող է տարիների ընթացքում օդի մէջ մնալ, բայց վերջ ի վերջոյ հօ պէտք է ընկնի ցամաքի կամ ովկիանոսի երեսին։ Այս փոշու հետքերը կարելի է գտնել ովկիանոսի բոլոր խոր տեղերի աղմի մէջ։ Վերջապէս կայ այլաս ասուպային փոշին, որը միշտ թափիւում է երկրագնդիս վրայ, բայց այնպէս փոքրքանակութեամբ և այնպիսի փշուած դրութեան մէջ, որ նրան

կարելի է զտնել միայն ովկիանոսի ամենախոր տեղերի տղմի մէջ, այնպիսի տեղերի, ուր արդէն գրեթէ չը կան ոչ օրդանական, ոչ էլ անօրդանական մասերի հետքեր:

Ովկիանոսի կապուտակը զանազան տեղերում տարբեր է, և ջինջ կապոյտից, ինչպէս, օրինակ, Ատյանտեան ովկիանոսի և հիւսիսային արեադարձի մօտ է, փոխուում է մուգ-լեղակագոյնին նոյն ովկիանոսի բարեխառն գօտում: Հաւանական է, որ գոյների այս տարբերութիւնը կախուած է գոյները առաջացնող կարծր նիւթի յատկութիւնների, քանակութեան և գասաւորութեան տարբերութիւնից: Միջերկրական ծովը և Շվեդիայի ամենախոր լճերը իրանց բազմատեսակ կապուտակ գոյնը պարտական են անպիսի նիւթին, որը այն աստիճան բարակ է և թեթև, որ, պրոֆէսուր Տինդալի կարծէքով, մի քանի դար կատարեալ հանդարտութիւն կը պահանջուէր, որպէս զի այդ նիւթը յատակը նստէր:

Սյապէս ուրեմն, դիտողութիւններն ու փորձերը այն եզրակացութեանն են բերում, որ երկնակամարի և ովկիանոսի պահնչելի կապուտակը, գոյների խաղը վերջալոյսի ժամանակ երկրներում և ամպերի մէջ, լեռնային բարձունքների և արվեստների միջանքուած արվեստների վրայ ծագում է միշտ նոյն փոշու մանր մասնիկների շընորհիւ, նոյն փոշու, որը իր կոպիտ ձևերով մեղ այնպէս ձանձրացնում է և վեասակար է երեսում:

Բայց եթէ փոշու ամբողջ ծառայութիւնը սահմանափակուէր միայն գոյներ և գեղեցկութիւն առաջացնելով,—շատերս կը գերադասէինք առանց նրան մի կերպ ապրել, միայն թէ նրա վեասակար հետեանքներից զերծ մնայինք; Վերջին ժամանակներս սակայն գտել են, որ փոշին բնութեան և մեր կետանքի մէջ ունի այլ ևս ուրիշ և աւելի կարենոր նշանակութիւն,—այն աստիճանի կարենոր, որ կամկածելի է, կը կարողանայինք արդեօք նոյն իսկ ապրել առանց նրան: Օդի վերին շերտերի մէջ գտնուող փոշուն ենք պարտական, որ առաջ են զալիս մասախուզներ, ամպեր և բարերար մեղմ անձրեներ, սարսափելի հեղեղների և աւերիչ սելաւների փոխարէն: Այս գիւտն առաջին անգամ արին Ֆրանսիայում կուլիէն և Մասկարը մօտաւորապէս քսան տարի սրանից առաջ և վերջնականապէս հաստատեց միստէր Զօն Էյտկենը 1880 թւին: Վերջինս գտաւ, որ եթէ գոլորշու մի շիթ ներս թողնենք երկու ապակէ անօթների մէջ, որնցից մէկը լցուած է սովորական օդով, իսկ միւսը բամբակի միջից անցկացրած և փոշու բոլոր մասնիկներից զտուած օդով,—այն ժամանակ առաջին անօթը իսկոյն կը լցուի սովորական ամպերի նման թանձր գոլորշով, մինչդեռ միւսը բոլորու

վին թափանցիկ կը մնայ: Մի ուրիշ փորձ աւելի ևս մօտենում
է այն բանին, ինչ որ տեղի է ունենում բնութեան մէջ:
ինչպէս և առաջին փորձի մէջ, այս անդամ էլ երկու-
անօթները նոյն եղանակով լցնում են օդով, միայն թէ երկու-
սի մէջ էլ մի քիչ ջուր են ածում: Երբ ջուրը կը գոլորշիանայ,
մինչև որ անօթների մէջ գտնուած օդը յագենայ, մի
փորք սառեցնում են, այն ժամանակ առաջին անօթի մէջ խիտ
ամպ կը գոյանայ, իսկ միւսը առաջուայ պէս թափանցիկ կը
մնայ: Այս փորձերը և սրա նման ուրիշ շատերը ցոյց են տա-
լիս, որ բաւական չէ միայն գոլորշիները սառեցնել, որպէս զի
նրանք անձրեաբեր ամպեր գառնան, եթէ օդի մէջ չը կան
կարծը նիւթի մասնիկներ, որոնք կարող են այն կենտրոնների
տեղ ծառայել, որոնց վրայ սկսում է գոլորշիների թանձրա-
ցումը: Ամպի խտութեան աստիճանը, ինչպէս երեաց, բոլորո-
վին համապատասխան է նրա մէջ պարունակուող կարծը մասնիկ-
ների քանակութեանը: Եթէ այն գոլորշին, որը դուրս է թռչում
տեղաշարժի (լոկոմոտիվի) պահպանողական զսպանակից կամ
ծիննելոյդից, այնպիսի թանձր սպիտակ շիթ է կալմում, դա ցոյց
է տալիս միան, որ օդը լցուած է փոշու մասնիկներով, որոնք
ինչքան էլ մանր լինեն, իսկոյն դառնում են գոլորշու թանձրա-
նալու կենտրոններ: Այս է պատճառը, որ եթէ օդի մէջ փոշին
բոլորովին չը լինէր, դուրս թռչող գոլորշին մեզ համար աներե-
ւոյթ կը մնար, և մենք բոլորովին ամպեր չէինք տեսնի երկրն-
քում, այնպէս որ այն գոլորշին, որ անընդհատ կուտակւում է
ծովերի շոգիանալուց կամ բարձրանում է ցամաքի երեսից,
պէտք է որեւէ ուրիշ միջոցներ որոնէր իր սկզբնական աղբիւ-
րին վերադառնալու համար:

Եթէ օդի մէջ փոշի չը լինէր, գոլորշին ջուր դարձնելու
միջոցներից մէկը կը լինէր ցողը, որն ամենալաւ ապացոյցն է
այն մտքի, թէ գոլորշին թանձրանալու համար պահանջում է
կարծը կամ հեղուկ մակերեսոյթներ: Յայտնի է, որ ցողը աւելի
հեցա և աւելի մեծ քանակութեամբ է գոյանում խոտի վրայ,—
հենց նրա համար, որ խոտը բազմաթիւ կենտրոններ է ներկա-
յացնում գոլորշու թանձրանալու և նստելու համար: Սակայն
ցողը այժմ առաջ է գալիս միայն ցուրտ պարզկայ զիշերները,
տաք և խոնաւ օրերից յետոյ: Այսպիսի գէպքերսւմ օդը հողի
երեսին տաք է լինում և շատ գոլորշի է պարունակում, թէն
յագենալու կէտին դեռ չէ համում: Բայց խոտի անթիւ ան-
համար շփման կէտերն և ընդարձակ մակերեսոյթը նպաստում
են ջերմութեան ձառագայթների արագ արձակման, և սառած
խոտը արագ սառեցնում է շրջապատող օդը, որը յագեցման կէտին

է հասնում և խոտի վրայ է կաթեցնում իր պարունակած գորշին։ Այս է պատճառը, որ երբ մթնոլորտը հէնց զնանի երեսին չափաղանց յագեցրած է լինում ջրային գոլորշիներով, այնպիսի առատ ցող է նստում—մանաւանդ ամեն տեսակ բոյսերի վրայ—որ ամեն բան, մեր շերեն անզամ, իսպառ թրջում է։ Եթէ օդի վերին շերտերի մէջ բոլորովին չը լինէին կարծր մասնիկներ կամ փոշի, ամբողջ խոնաւութիւնը կը վերադառնար գետնի երեսը և կը գանձար թանձր մասախուղ և յաճախակի յորդ ցողեր, որոնք անտառներում արագ նստելով ծառերի սաղարթի վրայ, կը փոխուէին հեղեղների, Ենթադրենք այնուհետեւ, որ միւնոյն ժամանակ ուժգին քամին կամ փոթորիկը պատահմամբ գետնից պոկել, բարձրացրել է կարծր մասնիկներ, այդ դէպում գոլորշիներով յագեցրած օդը արագ կը նստացընէր գոլորշին այդ մասնիկների վրայ, այդպիսով առաջացած կաթիլները ընկնելու միջոցին ճանապարհին կը հաւաքէին օդի պարունակած ամբողջ խոնաւութիւնը և կը փոխուէին ջրի մի ամբողջական զանգուածի կամ սաւանի, որը իր ծանրութեան և սրբնթաց անկման չնորհեւ այն աստիճան աւերիչ կը լինէր. որ դեռ հարց է, թէ չէր դարձնի արդեօք նա երկիրս բոլորովին անբնակելի։

Եթէ օդի մէջ փոշի չը լինէր, մթնոլորդի գոլորշիները կը նստէին գետնի վրայ՝ գլխաւորապէս բարձր լիոնաշղթաների լանջերին շփուելուց։ Մթնոլորդային գոլորշին, օդից համեմատաբար աւելի թեթև լինելով, ահազին քանակութեամբ կը հաւաքուէր մթնոլորդի վերին շերտերում, որոնք այդ պատճառով միշտ յագեցրած կը լինէին և հեշտ կը նստեցնէին գոլորշին ամեն կարծր կամ հեղուկ մակերեսովի վրայ։ Բայց քանի որ բոլոր լիոների վերին մասերի ունեցած մակերեսյթը շատ չնշին է համեմատած ամբողջ երկրագնդի ահազին մակերեսովի հետ, ուստի հետևանքները ճշմարիտ որ ահաելի կը լինէին։ Օդը լիոնային լանջերի վերին մասի հետ շփուելով՝ արագ կը նստեցնէր իր պարունակած ջուրը, և վերջինս վայր կը վիժուէր կատաղի հեղեղներով։ Լիոների լանջերին գոլորշիների այդ նստելը կը նոսրացնէր այդտեղ օդը, և խանգարուած հաւասարակշռութիւնը վերականգնելու համար ամեն կողմից պիտի գոյանային մթնոլորդային հոսանքներ, որոնք կը բերէին յագեցրած օդի նոր պաշար, իսկ սա այդպիսով անընդհատ կը նըստացնէր իր խոնաւութիւնը, նոր ջուր մատակարարելով հեղեղներին և աւելի ու աւելի սաստկացնելով օդային հոսանքները։ Հետևանքն այն կը լինէր, որ կ'առաջանային քամիներ, որոնք շարունակ կը փչէին բոլոր կողմերից դէպի լիոնաշղթաները և

գիշեր-ցերեկ կը թանձրացնէին ու կը նստեցնէին դոլորշին, ամբողջ տարին ուղարկելով գետնին այնպիսի յարդառատ ջուր, որպիսին նկատում է այժմ միայն ամենասաստիկ արևադարձային անձրեների ժամանակ: Այն բոլոր անձրեները, որոնք այժմ բաշխում են ցամաքի և ովկիանոսների ամբողջ մակերեսոյթի վրայ, մի քանի անապատ երկիրների բացառութեամբ, — այն ժամանակ կը տեղային բացառապէս միայն լեռների և մենաւոր դեք բլրագագաթների վրայ. սարսափելի հեղեղները կ'ողոզէին նրանց լանջերը, կազմելով խոր ձորեր և անկարելի դարձընելով բոյսերի երեան գալը: Այսպիսի պարագաներում աւերռուած և մերկացած լեռները չեին կարողանայ բնակելի լինել նրանց վրայ չեր կարողանայ պահպանուել ոչ բուսական, ոչ էլ կենդանական կեանքը:

Բայց գոլորշիների անընդհատ թանձրանալն ու նոտելը լեռների վրայ՝ հաւանական է՝ որ արգելք լինէր գոլորշիների ցողանալուն բոլոր ցածրանիստ տեղերում, որովհետև վերեռում դէպի լեռնային գագաթները փչող մշտական քամին իր մէջ կը քաշէր այն բոլոր գոլորշիները, որոնք բարձրանում են ովկիանոսներից և ուղիւշ ջրային մակերեսոյթներից, այսպիսով օդի ստորին շերտերը հարթութիւնների վրայ կը մնային գրեթէ բոլորովին չոր: Այս որ ենթալրելու լինենք պարզ է որ ցածրագեր երկրներումն էլ անհնարին կը լինէր բուսական, հետեապէս և կենդանական կեանքը, և հարթութիւններն ու ցածր տեղերը ամայի անապատներ կը դառնային՝ մեծ-մեծ գետերով ակօսուած, որոնք կը գոյանային անթիւ անհամար լեռնային հեղեղների միանալուց:

Ի հարկէ, այժմ գուցէ անկարելի է բոլորովին ճիշտ պատկերը տալ այն ամենի, թէ ինչ պիտի տեղի ունենար, եթէ փոշին չը լինէր, բայց մէկ բան անկասկած է, որ փոշու լիակատար բացակայութիւնը առաջ կը բերէր մի այնպիսի էական փոփոխութիւն երկրագնդիս օդերեսութաբանութեան մէջ, որ հաւանական է՝ ոչ մարդս, ոչ էլ այժմեան կենդանիներից և բոլուսերից մեծ մասը չեին կարողանայ գոյութիւն ունենալ երկրիս վրայ:

Այսպէս ուրեմն, յիշեցնենք համառօտակի այն ամենը, ինչ որ պարտական ենք մենք ամեն տեղ ափուած փոշուն և մանաւանդ այն մանրագոյն մասնիկներին, որոնք գտնուում են մթնոլորտի մէջ նոյնիսկ շատ և շատ վերատեր բարձր ովկիանոսի մակերեսոյթից: Նախ և առաջ, նա մեղ տալիս է երկնակամարի թանձր կապոյտը, բնութեան ամենագեղեցիկ գոյներից մէկը: Նա է, որ առաջացնում է սքանչելի արշալոյսեր և վեր-

ջալոյսեր և այն բոլոր փայլում գոյները, որ մենք տեսնում ենք բարձրագագաթ լեռնային երկրներում: Գեղեցկութեան կէսը կը կորչէր երկրիս երեսից, եթէ փոշին չը լինէր, բայց մի բան, որ մեզ համար աւելի կարեոր է, քան թէ երկնքի գոյնըն ու արեի վերջալոյսերի գեղեցկութիւնը, այդ այն է, որ փոշին է մեզ տալիս ցերեկուայ ցրուած կամ երկնային լոյսը և այն հաւասար, մեղմ և օգտավէտ լոյսը, որ ստացուում է բոլոր լուսատու աղբիւրներից: Անփոշի երկինքը մեզ բացարձակօրէն սև կ'երեար, և աստղերը տեսանելի կը լինէին մինչև անդամ ցերեկով: Երկնակամարը ինքնին մեզ ոչ մի լոյս չէր տայ: Կ'ունենայինք կամ պայծառ, լացուցիչ արեգակնային լոյս, կամ թանձր, մուգ ստուերներ գրեթէ առանց որեէ կիսաստուերների: Արդէն հէնց միայն այս պատճառով աշխարհը այն աստիճան տարբեր կը լինէր նրանից, ինչ որ է նա այժմ, որ ամբողջ բուսական և կենդանական կեանքը հաւանականօրէն բոլորովին տարբեր ձևեր կ'ունենար և նոյն իսկ մեր սեփական մարմինի կազմութիւնը բաւականաչափ կը կերպարանափոխուէր, որպէս զի մենք կարողանայինք կեանք վայելել ծայրայեղ և խիստ հակասական պայմաններով լի այդ աշխարհի մէջ:

Մեր տների մէջ շատ քիչ լոյս՝ կը լինէր, բացի այն տեղերից, ուր անմիջապէս կ'ընկնէր արեգակնային լոյսը, և ամեն մի տեղ, որ ուղիղ ճառագայթներից դուրս կը դանուէր, բոլորովին մութ կ'երեար, եթէ պատերից անդրագարձած լոյսը չը լինէր: Այն ժամանակ անհրաժեշտ կը լինէր տներում պատերը սպիտակ ունենալ և պատուհանները ամեն կողմ դարձրած, իսկ հիւսիսային կողմից ամեն տան առջև պէտք կը լինէր կառուցանել սպիտակ պատ, որպէս զի լոյսը արտացոլար այս կողմը, որը այլապէս կը մնար բոլորովին մութ: Բայց և այսպիսի հանգամանքներում մենք ստիպուած կը լինէինք ապրելու մերթ արեգակնային ճառագայթների սաստիկ փայլի մէջ, մերթ էլ լիսակտար խաւարի մէջ, երբ արեր որեէ բանով մեր աշքից կարուած կը լինէր, այնպէս որ արհեստական լուսաւորութիւնը այն ժամանակ կը գերադասուէր արեի լոյսից: Բայց արանից դուրս փոշու բացակայութիւնը կ'ունենար աւելի ևս կարեոր հետևանքներ, որովհետեւ առանց փոշու ոչ ամպեր կը գոյանային, ոչ մառախուղներ, ոչ էլ «բարերար երկնային անձրեներ», իսկ այս ամենի փոխարէն կ'ունենայինք անփոփոխ պայծառ արեգակնային լոյս, և անապատ ցածր հարթութիւններ և կատաղի հեղեղներից անընդհատ ողողուող լեռներ, այնպէս որ երկրիս վրայ կեանքը հազիւ թէ կարելի կը լինէր:

Կան այլ ևս մի քանի երեսոյթներ, որոնք կախում ունեն

նոյն ընդհանուր պատճառներից, ուստի նրանց մասին ևս կը խօսենք այսաեղ: Ամեն մէկը ի հարկէ նկատել է, որ մեծ տարբերութիւն կայ մթնոլորդի ընդհանուր տեսքի և նոյնիսկ լոյսի որպիսութեան մէջ—զարնանը և աշնանը, թէն օրերը միատեսակ տեղութիւն ունեն և արեւ միատեսակ բարձրութիւն՝ օրուայ միենոյն ժամերին: Գարնանը երկնքի կապոյտը աւելի թափանցիկ է լինում, մինչդեռ աշնանը, նոյն իսկ ամենապարզ օրերը, ամբողջ ընութիւնը սքօղուած է լինում մի ինչ որ գեղնաւուն ծխով, ոչ օդի այն թափանցիկութիւնը կայ, ոչ էլ երկնքի գոյնի այն մաքրութիւնը: Այս երևոյթը բոլորովին հականալի կը լինի, եթէ մենք ի նկատի առնենք, որ ձմեռուայ ընթացքում աւելի քիչ փոշի է գոյանում, և էլ այն փոշին, որը արդէն կուտակուած է լինում մթնոլորդի մէջ, նստում է երկրի վրայ անձրիկ և ձիսի հետ միասին և այդ պատճառով մթնոլորտը աւելի թափանցիկ է դառնում: Իսկ ամառը բոլորովին հակառակ պայմաններ են և առաջ են բերում բոլորովին հակառակ հետեանքներ, քան թէ աշնանը: Այլ ևս մէկ փաստ. ամենքը գիտեն, որ անձրեւ առաւել բարերար ազգեցութիւն ունի բոյսերի վրայ, քան թէ ամենաառատ արհեստական ոռոգումը: Այս երևոյթը նրանով է բացատրում, որ անձրեւ իր հետ բերում է օդից աւշակի մի փոքրիկ քանակութիւն: Այդ աւշակը ստացւում է այն զարծարանաւոր կամ մեներայցին մասնիկներից, որոնք իբրև կորիզ են ծառայում անձրեային կաթիների համար և այնպէս փոքր ու բարակ են, որ հնչտութեամբ լուծւում են գետնի մէջ և ծծւում են բոյսերի արմատների միջոցով:

Մթնոլորդի մէջ պարունակուող փոշու բոլոր այս բարերար հետեանքները տեղի են ունենում միայն այն ժամանակ, երբ փոշին տարածուած է լինում այնպիսի քանակութեամբ, որքան առաջանում է սովորական ընական պայմանների մէջ: Այսպէս, անդրադարձային անտառների ընդարձակ շրջանում, որտեղ փոշի առաջացնող պատճառները կարծես փոքրագոյնի են հասած, բարերար անձրեները յորդառաս են և երկնքի կապոյտը թանձր: Իսկ բոլոր խիտ ընակած երկրներում արհեստական միջոցներով չափազանց շատ փոշի է գոյանում—մեր վարած գաշտերից, մեր փողոցներից և ճանապարհներից, որտեղ ահազին փոշի է առաջանում անհամար ձիերի պայտերից: Բայց փոշու զիսաւոր ազբիւրը այստեղ այն է, որ չափազանց շատ զանգան նիւթեր ենք այրում, և օդը լցւում է ծխի ամպերով, որոնք ածուիք չ'այրուած մասնիկներ են պարունակում: Փոշու այսպիսի չափազանց քանակութիւնը մի քանի անգամ աւելի է այն քանակութիւնից, որ օրինակ՝ Սնգլիայում կար աւելի բը-

նական պայմանների մէջ, երբ նա դեռ այսպէս խիտ ընակուած չէր, և այս հանգամանքը անկասկած պէտք է որ փոխէր և՛ կըլիման: Եւ այս փոփոխութիւնը նկատուամ է ամպերի և մառախուղների շատանալու մէջ, մի բան, որ դեռ չէ կարելի ասել թէ նպաստում է անձրենների շատանալուն Անձրեկի դալը կախուած է օդի մէջ ջրային զոլորշինների հաւաքուելուց, ցող առաջնելու համար անհրաժեշտ ջերմութեան աստիճանից և օդի ճնշողութեան փոփոխութիւններից, որոնցից քամիններ են առաջնում: Հաւանական է, ամեն տեղ և միշտ, նոյն իօկ նշանաւոր բարձրութեան վրայ, օդի մէջ այնքան փոշի կայ, որ բաւական է, որպէս զի զոլորշինների թանձրանալու համար իբրև կենարուններ ծառայէ և, եթէ ուրիշ բարենպաստ պայմաններ էլ կան, անձրեւ տեղացնէ: Բայց որովհետեւ քանի երկրին մօտ է, այնքան փոշին աւելի շատ է, ուստի ամպերը աւելի թանձրպիտի լինեն, որքան աւելի ցածր են, թէև չեն կարող անձրեկի փոփուել, որովհետև հէնց որ ջրային կաթինները իջնում են օդի աւելի տաք և աւելի չոր շերտերը, նրանք կրկին զոլորշիանում են:

Այլ ես մէկ փաստ: Այժմ արդէն շատ ապացոյցներ կան, որ Անգլիայի բոլոր մասերում ամպերը շատացել են, հետևապէս նոյնչափ և արեգակնային լոյսը պակասել է: Կասկած չը կայ, որ միջին դարերում Անգլիան խաղողի երկիր էր, խաղողի, որի համար աւելի լոյս է հարկաւոր, քան թէ այժմ տեսնում ենք: Արեւ լոյսը կրկնակի ներգործութիւն ունի, նախ նա տաքացնում է դեսնի մակերեսոյթը և նպաստում է աւելի արագ աճման, ապա՝ ուղղակի աղդեցութիւն է ունենում պտուղի հասունանալու վրայ: Այս բանի օրինակը կարող է կանադան լինել, ուր թէև վեց ամիս խիստ ձմեռ է լինում, խաղողը բացողեայ բուսնում է այնպէս, ինչպէս և ամեն մի ուրիշ թուփ, և տալիս է պտուղ, որը իր յատկութիւններով ոչնչով պակաս չէ ջերմանոցում մեծացրած անզիվական խաղողից: Մի քանի տարի սրանից առաջ մի այգեգործական ամսաթերթ 40—50 տարուայ փորձ ունեցող այգեգործներից բազմաթիւ փաստեր հաւաքեց, որոնք ցոյց էին տալիս որ Անգլիայի կիման համեմատաբար մօտիկ ժամանակներս է փոփուել: Ապացուցուած էր, որ առաջ այս երկիրի շատ տեղերում, մանաւանդ հիւսիսում, ընտիր պտուղներ շատ լաւ բուսնում էին պարտէղներում, որտեղ այժմ նրանք բուսնել չեն կարող, և այս փոփոխութիւնը միատեսակ կերպով նկատուում է և արդիւնագործական կենտրոններից բաւականին հեռացած անկիւններում, որոնք գտընւում են ծիսի անմիջական, վլասակար աղդեցութիւնից դուրս:

Հէնց այս հետևանքն է, որ պիտի ունենային ամպերի շատա-
նալն ու արեի լոյսի համապատասխան չափով պակասելը: Իսկ ամ-
պերը անկասկած պիտի շատանային Անդիիայում, քանի որ չա-
փազանց շատացել է օդի մէջ փոշու քանակութիւնը երկրի
ազգաբնակութեան խտանալուց և մանաւանդ ծուխ ժայթքող
գործ արանքների անշափ բազմանալուց: Եւ դուրս է գալիս, որ
կալիտալիստ արդինագործներին հարստացնելու համար թոլ
ենք տալիս ամբողջ երկրի կլիման փչացնել այն աստիճան, որ
դրանից պակասում է պատղաւէտութիւնն ու գեղեցկութիւնը,
մի բան, որից միւս կողմից տուժում է ամբողջ ազգաբնակու-
թեան բարօրութիւնն ու առողջութիւնը, որովհետև արեի լոյսը
առողջ կեանքի էական պայմանն է: Երբ ժողովուրդը պարզ
կերպով կ'իւրացնէ այս ճշմարտութիւնը, նա վերջ կը դնի վա-
սակար ծուխ և փոշի այսպիսի թեթեամիտ և բոլորովին ան-
պէտք կերպով տարածելուն:

Ուրեմն, վերջ ի վերջոյ մենք դանում ենք, որ հոչակաւոր
զլլուելից փոշին, որը մեր կլիման է փչացնում, ցեխ, ամեն
տեսակ անյարձարութիւններ և մինչև անդամ հիւանդութիւն-
ներ է բերում մեղ, երբ հարկաւոր միջոցներ չեն ձեռք առնում
նրա չափազանց տարածուելու դէմ,—այդ փոշին բնական պայ-
մանների մէջ կարեռ զեր է խաղում բնութեան տնտեսութեան
մէջ: Նա առանձին գեղեցկութիւն է տալիս բնութեան տեսա-
րաններին, առաջ է բերում գոյների և լոյսի բազմատեսակ
խաղը երկնակամարի վրայ, ամպերը և արշալոյսի ու վերջալոյսի
ներկերը, և այսպիսով մեր կեանքն աւելի ուրախալի է դար-
ձնում: Բացի սրանից նա է էական պատճառ ցրուած ցերե-
կուայ լոյսի և չափաւոր անձրեների, որոնք փոփոխակի յաջոր-
դում են չոր եղանակներին, և այսպիսով նա բացարձակ կեր-
պով անհրաժեշտ է մեր երկրային գոյութեան համար և գուցէ
ընդհանրապէս ամբողջ վերջրեայ (ստորջրեայ կեանքին հակա-
դրուած) կեանքի զարգացման համար: Շատ գիւտեր են արուած,
որոնք պարզաբանում են, թէ ինչ կարեռագոյն նշանակութիւն
ունեն մեր կեանքի համար զանազան մանրիկ, յաճախ արհա-
մարհուած իրեր, և այս տեսակ գիւտերը լրացնելու համար
հէնց շատ ժամանակին վրայ հասան նորագոյն հետազօտաթիւն-
ները՝ ամեն տեղ տարածուած մթնոլորդային փոշու ահագին
գերի և բարերար ազգեցութեան մասին:

X

ՔԻՄԻԵՑԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ:

Ժամանակակից քիմիան, որպէս գիտութիւն, հիմնաւոր-
ութեած է ներկայ հարիւրամեակի ընթացքում: Նրա երեսյթներն
ու օրէնքները այնպէս բարդ են, որ այսուղ մենք կարող ենք
կանգ առնել նրա գիւտերից միայն մի քանի այնպիսիների
վրայ, որոնք կեանքի և զիտութեան մէջ նոր սպասելիքների
դուռը բանալով, միենայն ժամանակ կարող են ընդհանուրին
մատչելի կերպով բացատրուած լինել: Այդ գիւտերից ամենա-
կարեորը, որը քիմիայի, որպէս գիտութեան, հէնց հիմքն է
կազմում, ըիմիական միաւորութիւնների օրէնքն է, այս
օրէնքը բացատրող հիւլէական տեսութեան հետ միասին:

Որ քիմիական տարրերը միաւորուած են որոշ համեմատական
չափերով, կաուկածում էին արդէն նախորդ գարերի գիտնական-
ներից մի քանիսը, բայց միայն ներկայ հարիւրամեակի սկզբում
անգլիացի Դալտոնն (+1844) առաջին անգամ անվիճելի կերպով
հաստատեց այս օրէնքը և բացատրեց բաւականին պարզ տեսու-
թեան օգնութեամբ: Մեր միտքը լաւ մեկնելու համար գիմենք
օրինակներին: Երկու գաղ, բորակածինն (ազօտ) ու թթուածինը,
միաւորուելով, կազմում են այնպիսի բաղադրեալ մարմիններ,
որպէս են բորակածնի միաթթւուկը կամ «ուրախացնող զազը»,
բորակական թթուուկը և ուրիշ մի քանիսը: Բորակածնի միա-
թթւուկը բազկացած է կշռով 28 մաս բորակածնից և 16 մաս
թթուածնից: Նոյն գազերի մասցած բոլոր միաւորութիւնները
բաղկացած են թթուածնի երկու, երեք, չորս և հինգ անգամ
աւելի մեծ քանակութիւնից, մինչդեռ բորակածնի քանակութիւնը
միենոյնն է մնում: Զուրը կազմուած է 16 մաս թթուածնից և
երկու մաս ջրածնից, բայց կայ և մի ուրիշ միաւորութիւն—32
մաս թթուածնից նոյնքան (2 մաս) ջրածնի հետ, որը կազմում է
ջրածնի երկթթւուկ կամ թթուեցրած ջուր: Այս օրէնքը գոր-
ծադրուում է առանց բացատրութեան բոլոր մեզ յայտնի միաւո-
րութիւնների մէջ, և որովհետեւ ամեն տարր ունի իր ամենա-
փոքր համեմատական կշռով, երբ կարող է միաւորութիւն կազ-
մել որեէ ուրիշ տարրի հետ, ուստի այս կշռով կո-
չում են տարրերի հիւլէական կամ միաւորական կշռու-
թիւն հիւլէական կշռի չափի միութիւն ընդունուած է ջր-
ածնի կշռով, որովհետեւ բոլոր միաւորութիւնների մէջ

ջրածնի կշռը բոլոր նրա հետ միաւորուող ուրիշ տարրերի կշռից շատ և շատ փոքր է:

Այս եղանակով գտել են, որ բորակածնի կշռը հաւասար է 14-ի, թթուածնինը—16-ի և քլորինը—35-ի: Սրանք դադեր են, բայց կարծր մարմիններից շատերը աւելի փոքր հիւլէական կշռու ունեն, օրինակ, ածխածինը (կամ մաքուր ածուխը) ունի 12, իսկ շատ սակաւագիւտ մետաղ բերիլինինը—միայն 9; Ուրիշ մետաղներից ալլիւմինինը հաւասար է 27, պղինձը—63, երկաթը—56, արծաթը—107, անդազը (լիայեկը)—117, ոսկին—196: Այսպիսով տեսնում ենք, որ հիւլէական և տեսակարար կըշուի մէջ ոչ մի հաստատուն կապ չը կայ: Անագը, օրինակ, մի քիչ թեթև է երկաթից, իսկ նրա հիւլէական կշռը աւելի քան երկու անգամ առաւել է, քանի ոսկունը. ոսկին ունի բաւականին մեծ հիւլէական կշռ, իսկ բիսմութը—աւելի ես մեծ, թէն վերջինս երկու անգամ թեթև է ոսկուց:

Այս երեսիները նկատեց և որոշ չափով բացատրեց Դալտոնը իր հիւլէական տեսութեան օգնութեամբ: Նա ենթադրում էր, որ ամեն մի տարր պիտի բաղկացած լինի հիւլէներից, որ ամեն մի հիւլէն անբաժանելի է և ամենափոքր մասնիկն է, որը պահպանում է տարրի բոլոր յատկութիւնները, և որ ամեն տարրի հիւլէն իր առանձին կշռը ունի: Երբ մի տարր միաւորում է միւսի հետ, մէկի ամեն մի հիւլէն միաւորում է միւսի կամ մէկ կամ երկու, երեք, չորս և այլն ամբողջական հիւլէների հետ, ասել է՝ այն համեմատութիւնները, որով այդ տարրերը միաւորուում են, պիտի համապատասխան լինեն մէկ կամ մի քանի անգամ կրկնուած հիւլէական կշռին: Այս բանը կարելի է պարզել հետեւալ օրինակով: Բորակածնի և թթուածնի հիւլէական կշռը հաւասար է 14-ի և 16-ի. այս երկու տարրերը կարող են միաւորուել հինգ զանազան համեմատութիւններով, ինչպէս ցոյց է տալիս ստորև դրուած պատկերը, որ հիւլէները ներկայացրած են N (բորակածին) և O (թթուածին) տառեր կրող քառակուսիներով:

Քիմիական նշանները կամ քանածեները.

$\boxed{\text{N}}$ $\boxed{\text{N}}$ $\boxed{0}$ = Բորակային թթուուկ = N_2O (բորակածնի միաւորութիւն)

$\boxed{\text{N}}$ $\boxed{\text{N}}$ $\boxed{0}$ $\boxed{0}$ = Բորակային թթուուտ = N_2O_2 (բորակածնի եռաթթուուկ)

$\boxed{\text{N}}$ $\boxed{\text{N}}$ $\boxed{0}$ $\boxed{0}$ $\boxed{0}$ = Բորակային թթուուտ = N_2O_3 (բորակածնի եռաթթուուկ)

$\boxed{\text{N}}$ $\boxed{\text{N}}$ $\boxed{0}$ $\boxed{0}$ $\boxed{0}$ = Ենթաբորակական թթուուտ = N_2O_4 (բորակածնի քառաթթուուկ)

[N] [N] [O] [O] [O] [O] = N_2O_5
 (բորակածնի հնդաթթւուկ *):

Բազմաթիւ փորձերով որոշեցին բոլոր տարրերի հիւլէ-ական կամ միաւորական կշիռը, և ստացուեց նշանների կամ բանաձևերի մի հիանալի աղիւսակ, որը շատ և շատ դիւրացնուս է անթիւ բաղադրեալ քիմիական մարմինների հետազօտութեան դործը: Ամեն մի տարր նշանակում է իր քիմիական անուան սկզբնատառով կամ երկու բնորոշ տառերով, այսպէս որ բոլոր մեզ յայտնի տարրերը (թւով մօտ 70) գրւում են թիթեառ պարզ կերպով: Բայց այս նշանները ոչ միայն տարրերն են ցոյց տալիս, այլ և նրանց որոշ համեմատական կշիռ,—հիւլէական կշիռը: Այսպէս Հ (Hydrogen) նշանակում է ջրածնի կշռի միութիւն—1. C(carbonium) նշանակում է ածխածին (բնածուխ), որը հաւասար է ջրածնի 12 միութեանց. (Fe Serrum) երկաթը հաւասար է ջրածնի 56 միութեանց: Այսպիսով որևէ բաղադրեալ նիւթի նշանը կամ բանաձևը ցոյց է տալիս համառոտուած, ոզմուած ձևով ոչ միայն այն տարրերը, որոնցից նա բաղկացած է, այլ և ինչ համեմատական չափերով են նրանք միաւորուած: Օրինակ, $\text{C}_2\text{H}_6\text{O}$ զուտ ալկոհոլի քիմիական բանաձեն է, որը ցոյց է տալիս, թէ ալկոհոլը բաղկացած է ածխածնի 2, ջրածնի 6 և թթուածնի 1 հիւլէից: Նայելով յիշուած տարրերի հիւլէական կշիռը տախտակի մէջ, կը գտնենք, որ ալկոհոլի ամեն 46 մասնիկը կազմուած է 24 մասնիկ ածխածնից, 6 մասնիկ ջրածնից և 16 մասնիկ թթուածնից: Այս նշանների օգնութեամբ, ձեռքի տակ ունենալով տարրերի ճիշտ որոշուած հիւլէական կշիռը, քիմիկուը կարող է այն բոլոր բաղադրեալ միաւորութիւններն ու տարրալուծութիւնները, որոնք տեղի են ունենում փորձերի ժամանակ, ներկայացնել մի տեսակ ալգեբրայական նշաններով: Այս եղանակով ստացուած բանաձևերը յաճախ թիւազրում են զիտնականին նոր և նոր միաւորութիւններ և երբեմն անսպասելի դիւտերի են հասցնում:

Գրեթէ հէնց այն ժամանակ, երբ Դալտոնը աշխատում էր իր հիւլէական տեսութեան վրայ, Դէվին գտաւ երկու նոր տարր.

*) Այս բանաձևերը նշանակում են—1) N_2O բորակային թթւուկ բաղդրելու համար պիտի վերցնել բորակածին $14 \times 2 = 28$ և թթւուածին $16 \times 1 = 16$ մաս կշռով; 2) N_2O_4 —բորակական թթւուկի համար—բորակածին $14 \times 2 = 28$ և թթւուածին $16 \times 2 = 32$ մաս. 3) N_2O_5 —բորակային թթւուտի համար—բորակածին $14 \times 2 = 28$ և թթւուածին $16 \times 3 = 48$ մաս. 4) N_2O_4 —ենթարութական թթւուտի համար—բորակածին $14 \times 2 = 28$ և թթւուածին $16 \times 4 = 64$ մաս. և 5) N_2O_5 —բորակական թթւուտի համար—բորակածին $14 \times 2 = 28$ և թթւուածին $16 \times 5 = 80$ մաս:

տարրալուծելով ելեկտրական հոսանքի օգնութեամբ նատրոնը (բորակ, սոդա) և կալի, նա ձեռք բերեց երկու մետաղ—նատրիոն և կալիոն: Ելեկտրականութեան այս գործադրութիւնը քիմիկոսների ձեռքը տուաւ մի նոր հզօր միջոց ուրիշ տարրեր գանելու, թէ սպեկտրային վերլուծութիւնը վերջը այդ կողմից աւելի ևս հզօր գործիք դարձաւ, որովհետև նա միաժամանակ գործադրուեց և քիմիայի, և աստղաբաշխութեան մէջ:

Ժամանակակից քիմիայի ամենահետաքրքրական գիւտերի միջից պէտք է մատնացոյց անենք այն միջոցների վրայ, որոնցով գանազան գաղերը հեղուկ են դարձնում, իսկ շատերը նոյնիսկ կարծր մարմին: Եւ մէկ որ գիտենք, թէ ելեկտրական հնոցի սաստիկ ջերմութեան օգնութեամբ բոլոր կարծր տարրերը կարող են հալչել և շատերը նոյնիսկ դազի փոխուել, պէտք է ուրեմն եղբակացնենք, որ ամեն նիւթ երեք վիճակ կարող է ունենալ—կարծր, հեղուկ և գազանման, նայելով թէ ինչ աստիճանի տաքութեան է հնդիարկուած:

Զանազան գործարանաւոր մարմինների չափազանց բաղադրեալ միաւորութիւնները, ինչպէս են օրինակ՝ ալբումինը (սպիտ), ճարմը, բուսական սոսինձը, ձիւթը, թթւուտները, իւղերը, եթերը և այլն, գործարանաւոր (օրգանական) քիմիայի առարկան են կազմում, որը վերին աստիճանի հետաքրքրական գիւտերի է հասել: Ձիւթը մեզ տալիս է մի շարք ներկարար նիւթեր, ինչպէս անիլինն է և ուրիշ ներկերը, նոյն մարմնից հանւում են բենզու, կարբուեան թթւուտ, նաւթ, կրէազոտ, արհեստական քինաքին և շաքարին, որ շաքարն է փոխարինում: Նոր պայթուցիկ նիւթերը, ինչպէս՝ գինամիտն ու նիտրոգլիցերինը, հանւում են նոյնպէս կենդանական կամ բուսական ճարպանիւթերից,—և վերջապէս ժամանակակից քիմիայի բարձրագոյն յաղթամանակն է այն հրաշալի գիւտը, որով միջոցներ են ձեռք բերուած արհեստական կերպով այսպիսի բնական նիւթեր պատրաստելու, որոնք մինչեւ այսօր համարւում էին յատկապէս գործարանաւոր ծագում ունեցող նիւթեր, օրինակ, լեղակի ներկը, կիտրոնի թթւուտը, մէզը և մի քանի ուրիշները:

Նորեւս քիմիայի փիլիսոփայութեան մէջ նոր մեծ քայլ է արուած չորհիւ ուսւա քիմիկոս Մենդելէսի աշխատութիւնների, որոնց մէջ նոր տեսութիւն է պարունակում տարրերի բնական դասաւորութեան համար և մի քանի կարեոր եղբափակութիւններ են արուած այս տեսութիւնից: Նա մի տախտակ կազմեց, ուր բոլոր ամենածանօթ տարրերը դասաւորուած են ութը ուղղահայեաց սինեակներով, նայելով նրանց քիմիական ազդակցութեան կամ յայտնի նմանութեան աստիճանին, թէ

որբան են ձգտում իրար հետ քիմիական միաւորութիւններ կազմելու ։ Նոյն այդ տարրերը դասաւորուած են նաև հորիզոնական ուղղութեամբ 12 շարք, նայելով նրանց հիւէական կշռի նմանութեան աստիճանին, այնպէս որ այդ կշռով կանոնաւոր կերպով աճում է առաջին սիւնեակից մինչև ութերորդը։ Այս եղանակով կազմուած տախտակի մէջ տեղ-տեղ նկատում են բաց տեղեր հիւէական կշռի կանոնաւոր աճման կարգի մէջ, կարծես թէ այստեղ մի քանի տարրեր պակասելիս լինեն, ուրիշ անգամները տարրի իր կշռի համեմատ բռնած տեղը չէ համապատասխանում այն տեղին, որը նա բռնում է իր քիմիական յատկութիւնների չնորհիւ Բայց այս տախտակը մի այնպիսի ընդհանուր համաչափութիւն ունի, որ, նրա վրայ հիմնուելով՝ Մենդելէիր նախագուշակեց նոր տարրերի գիւտը ապագայում, տարրերի, որոնք պիտի լրացնեն բաց տեղերը, և միևնոյն ժամանակ առաջուց նկարագրեց այդ անծանօթ տարրերի ֆիզիկական և քիմիական յատկութիւնները։ Մի քանի տարրի անց գտնուեցին երեք նոր տարրեր—գալիոն, սկանդիոն և գերմանիոն, որոնք լրացնում էին Մենդելէի տախտակի բաց մեացած տեղերը։ Աւելի ուշի-ուշով հետազոտելով այն տարրերի հիւէական կշռով, որոնք տարօրինակ, անհամապատասխան տեղ էին բռնում տախտակի մէջ, դիտնական-ները ցոյց տուին, որ նրանք միաւ էին այնտեղ ընկել. օրինակ, ուրանիոնը պրոփ. Մենդելէիր շատ ներքեւ էր զրել, մինչդեռ ուղին, տելլուրը և ամսանը—շատ վերև Այս դուշակութիւնների զարմանալի աջողութիւնը, որը միշտ ամենալաւ ապացոյց է տեսութեան ճշմարտութեան, —գրեթէ մի գիտնական օրէնք դարձրեց տարրերի մէջ ըստ Մենդելէի եղած յարաբերութիւնները և հաստատեց այն քիմիկոսների կարծիքը, որոնք ասում են, թէ այն, ինչ որ մենք տարր կամ անլուծելի նիւթ ենք անուանում, իսկապէս տարր չէ և թէ տարրերի յատկութեանց մէջ եղած բոլոր տարրերութիւնները կախում ունեն միայն պարզ հիւէների առանձին համախմբումից, որոնց—հիւէների —կապակցութիւնը այն աստիճան ուժեղ է, որ մենք գետ չենք կարող, գուցէ և երբեք էլ չենք կարողանայ խախտել այն, ուստի ոչ անկարելի, ոչ էլ անհաւատալի բան է, եթէ չուտով մի որեւ հնարով կամլու ծեն տարրերից մի երկու կամ մի քանիսը քանի նոր, իրանց յատկութիւններով մեզ արդէն յայտնի տարրերի նման՝ տարրերի, կամ վերջապէս վճռեն այն խնդիրը, որը զբաղեցնում էր միջնադարեան ալքիմիկոսների մաքերը, —այն է՝ մի քանի հասարակ մետաղները ուսկու փոխելու։ Մի քանի ամիս որանից առաջ մի յայտնի ամերիկացի քիմիկոս յայտարարեց, թէ ինքը